

Գիտություն



ՄԱՅԻՍ
№ 4 (181)
2005թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Էդիտոր
ապրեց 84
տարի,
Լեոնարդո
դա Վինչին՝
94, Անտոնի
վան
Լեոնարդո
91,
Արքիմեդի
սպանեցին
75 տարեկան
հասակում..
Իսկ մեզ
ասում են՝
մեծահասակ
եր,
հեռացեք..
Այսօր՝
8-րդ էջում
ակադեմի-
կոս Լեոնար-
դո Ալալովյա-
նի մտահո-
գություննե-
րը

ՀՀ ԳԱԱ նախագահության 2005 թ. հունվարի 12-ի N 1/1520 որոշմամբ գիտության բարեփոխումների ծրագրի մշակման նպատակով ստեղծվել է հանձնաժողով և աշխատանքային խումբ: Առաջին փուլի աշխատանքները ավարտվել են: Նկատառումները ուսումնասիրվել և քննարկվել են ՀՀ ԳԱԱ նախագահության և ԱԺ նիստերին:
Ձեր քննարկմանն ենք ներկայացնում ՀՀ գիտատեխնիկական համակարգի բարեփոխումների վերաբերյալ նկատառումները: Առաջարկությունները և դիտողությունները ներկայացնել մեզ:

ՆԱԽՏԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ենթադրվում է, որ բարեփոխումների քաղաքականությունը պետք է ձևավորվի երկրի տնտեսական զարգացման ընդհանուր համատեքստում և կանխորոշի այնպիսի մոտեցումներ, որոնք կմեծացնեն գիտության և տեխնոլոգիաների նշանակությունը և ներգործությունը տնտեսական զարգացման գերակա ասպարեզներում, կստեղծեն նոր հնարավորություններ և բարենպաստ պայմաններ գիտության և ինովացիոն տեխնոլոգիական մշակումների արդյունքների կոմերցիալացման համար:

Մեր կարծիքով բարեփոխումների համար պետք է քիչախ հանդիսանան պետական գիտատեխնիկական քաղաքականության հետևյալ առաջնահերթ հիմնախնդիրները:

1. Գիտատեխնիկական ոլորտում պետության դերի վերագնահատում և պետական աջակցության մեծացում

Հասարակության զարգացման գործընթացներում գիտության, որպես հիմնական գործոնի, դերը բարձրացնելու նպատակով հիմնովին պետք է փոխվեն գիտության և պետության փոխհարաբերությունները: Հետևյալը անցյալում մնացին այն ժամանակները, երբ գիտության և պետության կապերը սահմանափակվում էին վերջինիս կողմից գիտության մեկենասությամբ: Մեր կարծիքով պետությունը գիտության հանդեպ պետք է հանդես գա իբրև

- օրենսդիր՝ գիտատեխնիկական ոլորտի գործունեության իրավական հիմքերը սահմանող,
- գիտահետազոտական աշխատանքների համար փրամադրվող միջոցների հիմնական աղբյուր,

- գիտատեխնիկական ներուժի զարգացմանն ուղղված փնտրության բոլոր սեկտորների գործողությունների համակարգող,

- նոր գիտափորձ արտադրանքի պատվիրատու և զանգվածային ապահովող,

- և վերջապես, քաղաքական ուժ, որն ընդունակ է ընդհանրապես որոշել ամբողջ հասարակ-

կության դիրքորոշումը գիտության և տեխնիկայի հանդեպ, գիտության ոլորտն ապահովել լայն հասարակական աջակցությամբ և հեղինակությամբ ազգաբնակչության բոլոր շերտերում:

Մենք առանձնապես կարևորում ենք վերջին երկուսը: Նախ կառավարության դերի, որպես գիտական արդյունքների պատվիրատուի և օգտագործողի թերագնահատումը, մեր կարծիքով տնտեսության և գիտության միջև խզման հիմնական պատճառներից մեկն է: Մյուս կողմից առավել վտանգավոր է հասարակական գիտակցության փոփոխությունը գիտության նկատմամբ: Վերջին տասնհինգ տարում խիստ ընկել է գիտության վարկը: Հանրային գիտակցություն համառոտեմ ներարկվում է այն միտքը, որ Հայաստանում գիտությունը չափից դուրս շատ է և որ այն այդ ծավալով պետությունը ի վիճակի չէ պահպանել և զարգացնել:

Գիտությունը երբեք չի եղել արտադրության հաշվին ապրողի կարգավիճակում, չնայած այն միշտ հանդիսացել է նոր տեխնոլոգիաների աղբյուր արտադրության համար և ներդրումները գիտության մեջ, ինչպես դա լավ հասկանում են զարգացած երկրներում, ի վերջո վերադարձվում են բազմապատիկ անգամ և շարունակաբար:

2. Գիտատեխնիկական քաղաքականության և գիտության կառավարման ինստիտուցիոնալ բազայի զարգացում

ԳԱԱ-ի նախագահությունը բազմիցս անդրադարձել է այս խնդրին և ունի հետևյալ մոտեցումը՝

- վերականգնել ՀՀ գիտության և առաջադարձ տեխնոլոգիաների խորհուրդը ՀՀ վարչապետին առընթեր և նրա նախագահությամբ: Խորհուրդը կոչված պետք է լինի մշակել և ընդունել կառավարությանն ուղղված առաջարկություններ պետական գիտական և գիտատեխնիկական քաղաքականության բոլոր հիմնահարցերի վերաբերյալ: Միաժամանակ Հանձնաժողովը պետք է դառնա գրիչ և ուղղորդի կառավարության համա-

պարասխան որոշումների համար:

Այն պետք է կազմավորվի գիտական քաղաքականության իրականացման համար պատասխանատու պետական կառույցների, այդ թվում ՀՀ ԳԱԱ-ի և առաջատար բուհերի իրավասու ներկայացուցիչներից, գիտատեխնիկական գործունեության հիմնական ասպարեզների առաջատար գիտնականներից և փորձագետներից,

- Կառավարության կառուցվածքում ստեղծել գիտության և տեխնոլոգիաների կառավարման ինքնուրույն, վերագրապետական մարմին (վարչուր-

յուն), որին կից կանգնվեն ՀՀ ԿԳՆ համապարասխան լիազորությունները և գործառնությունները,

- դիտարկվող կառավարման սխեմայում պահպանել և հարակորեն իրագործել ՀՀ ԳԱԱ-ին Օրենքով սահմանված խորհրդարկական և փորձագիտական լիազորությունները, որոնք կիրականացվեն ինչպես խորհրդի շրջանակներում (իր ներկայացուցիչների միջոցով), այնպես էլ կառավարությանն ուղղված առաջարկությունների շնորհիվ:

3. Գիտելիքի պահանջարկի խթանում արտադրական ոլորտում: Ինովացիոն քաղաքականության իրականացմանը նպաստող գործոններից մեկն է հիմնարար գիտություն - բարձր տեխնոլոգիաներ - արտադրություն - շուկա շղթայի ձևավորումը:

Հայտնի կարգախոսը՝ «գիտելիքների տնտեսությունը» պետք է փոխարինի «տեխնոլոգիաների տնտեսությամբ»՝ հասկանալի է, որ ինքնաբերաբար տեղի չի ունենա: Ինչ-որ մեկը պետք է գլխավորի այդ բարդ, բազմաբնույթ դժվարություններով հագեցած գործընթացը: Այս առումով շատ կարևոր է նշված գործընթացում հստակեցնել ՀՀ ԳԱԱ-ի տեղը և դերը: Այս խնդրի կատարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանն էլ պետք է նպատակաուղղված լինեն գիտատեխնիկական քաղաքականության բարեփոխումները:

Կարծում ենք, որ ինովացիոն գործունեության իրականացման համար նախ և առաջ անհրաժեշտ է ձևավորել համապատասխան ենթակառուցվածք: Իհարկե, այդպիսի ենթակառուցվածքի առանձին տարրեր արդեն առկա են՝ տեխնիկական միջոցների համակարգ (տեխնոպարկ), բիզնես-ինկուբատորներ, տեխնոլոգիաների տրանսֆերտ կենտրոններ: Այժմ խնդիր է դրված ստեղծել ամբողջական կառույց - համակարգ, որն իրոք ի վիճակի կլինի գործել արդյունավետորեն և արգասաբեր: Դրա համար անհրաժեշտ կլինի լուծել հիմնախնդիրների մի ամբողջ համալիր՝

- տեղեկատվական համակարգերով ա-

> 2



ԱՆՈՒՄՆԵՐ ԵՆԵՑ ԴԱՅԵՐԻ ՅԵՂԱՍԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՕ-ԱՄՅԱԿԸ

Մերենան սխալում էր Մենայի ափով: Հանկարծ առափնյա պուրակում մի ծանոթ ուրվագիծ երևաց:

Արգելակեցինք ու չսխալվեցինք: Մենայի առափնյա փողոցի կենտրոնական պուրակում Կոմիտասի հուշարձանն էր:

Դեռ չէինք մոտեցել հուշարձանին, երբ մայրեպրին կանգնեց մեկ այլ ավարտաբենա՝ Մարսելիս: Ամբողջ ընկալմանը եկել էր հուշարձանին այցելության:

Միշտ ուխտավորներ կան, գալիս են

հայեր՝ շար երկրներից, պարսմում է մեր հյուրընկալը՝ Բյուզանդ Ֆնդիկյանը:

Կոմիտասը իր կյանքի վերջին տարիները անցկացրեց Փարիզում ու իր վերջին հանգրվանը գրավ մայր հողում:

Ֆրանսիան հիշում է մեծ երաժշտին, հայ ժողովրդի մեծ պավակին:

Լուսանկարը
Ջ. ՉԱՏԻՆՅԱՆԻ

Փարիզ

Լետադարձ հայացք գցելով Հայաստանի և հայ ժողովրդի բազմադարյան պատմության վրա՝ մենք նորից ու նորից համոզվում ենք, որ մեր ժողովրդի անցյալում աշխատասիրության, ազատ ապրելու և ստեղծագործելու տենչանքի, ուսման ծարավի ու հաղթողի բնավորության շնորհիվ է Հայաստանը գոյատևել մինչ այսօր։ Նա իր պատմության բոլոր ելևէջներին հենվել է երեք հոգևոր հիմնաքարերի վրա՝ գիտություն, կրթություն, մշակույթ, որոնք միշտ շաղկապված են եղել վեհ գաղափարներով՝ սերն առ Հայրենիք և հավատն առ Աստված։

Պատահական չէ՝ երբ թվարկում են հայոց պատմությունը կերտող մեծերին՝ թագավորներին, կաթողիկոսներին, գորավարներին և քաղաքական գործիչներին՝ ժամանակն արժեքավորելու առումով, մեծ ակնածանքով հիշում են նույն դարաշրջանի հայ մեծ մտավորականներին՝ Մեսրոպ Մաշտոցին, Մովսես Խորենացուն, Դավիթ Անհաղթին, Անանիա Շիրակացուն, Գրիգոր



Գիտության և կրթության մի ամբողջ ծրագիր։ Այսօր Հայաստանի Հանրապետության կրթական ոլորտում կան բազմաթիվ կնճռոտ և չլուծված հարցեր՝ դպրոցների հնացած շենքերը, ծերացած նյութատեխնիկական բազան, դասագրքերի որակը, դասավանդման մեթոդները, շրջանավարտների մնացորդային ցածր գիտելիքները և ընդհանուր կուլտուրան։

Ընդունելի չեն դրսից թելադրված այն բոլոր «բարեփոխումները», որոնք բերում են դպրոցների փակմանը, ուսուցիչների կրճատմանը, 30-40 աշակերտանոց դասարանների առատությանը, աշակերտի բնակավայրից շատ հեռու գտնվող դպրոցների ցանցի ընդլայնմանը և այլն։

Անհապաղ պետք է ընդլայնել միջնակարգ մասնագիտական կրթության համակարգը։ Մեզ պետք են տարբեր մասնագիտությունների միջին օղակի կրթյալ մասնագետներ։ Անհնար է պատկերացնել հանրապետության տնտեսության կազմակերպումը առանց այդ մասնագետների։ Հանրապետությունում գործում են

ըստ իս, ավելի քիչ պատվավոր չէ, որքան գուտ եվրոպացի լինելը։ Մենք, հիմնական, կարող ենք և պետք է հպարտանանք, որ ասիացի ենք, հպարտանանք մեր ծագումով և դարավոր պատմությամբ։ Համոզված են, որ ծագումացիները և չինացիները ևս հպարտ են, որ իրենք ասիացի են, հպարտանում են դարերից եկող համամարդկային արժեք ունեցող գիտությամբ, կրթությամբ, մշակույթով, ազգային ավանդույթներով, իրենց դիմամիկ առօրյայով և կանոնադրված ապագայով։ Մենք հիմ ժողովուրդ ենք, բայց պետք է ամեն ինչ անենք, որ հնացած չդառնանք, չդառնանք ժողովուրդ՝ առանց ազգային ավանդույթների, ժողովուրդ՝ առանց ապագայի։ Ուրեմն, եկե՛ք որոշ վերապահումներով նայենք Հայաստանի եվրոպականացման գործընթացին։

Գիտությունը, ինքնին լինելով «պահպանողական», միաժամանակ մարդկային գործունեության առավելագույն դիմամիկ և առաջադիմական ոլորտներից մեկն է։ Նա իր ներուժով ի վիճակի է կերպարանափոխել տնտեսությունը, հասարակությունը, հասարակական հարաբերությունները, քաղաքականությունը և, ընդհանրապես, երկիրն ամբողջությամբ։

Գիտությունը տարիների ընթացքում աննկատ փոխել է Հայաստանի Հանրապետությունը՝ այն դարձնելով զարգացած արդյունաբերություն և գյուղատնտեսություն ունեցող երկիր։ Հանրապետության քիմիական, լեռնամետաղագործական, ռադիոէլեկտրոնային, մանրէաբանական արդյունաբերությունները, ճշգրիտ գործիքաշինությունը ու մեքենաշինությունը, կառավարման էլեկտրոնային համակարգերի ստեղծումը և այլն՝ արդյունք են մեր գիտության հաջողությունների։

Միշտ էլ բարձր է եղել հայ գիտության մակարդակը։ Մաթեմատիկայի, մեխանիկայի, ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության հայկական գիտական դպրոցները հայտնի են աշխարհում։ Հայ գիտնականների ստացած արդյունքները գտել են համընդհանուր ճանաչում և լուրջ ներդրում են համաշխարհային գիտության մեջ։ Մեր գիտնականների աշխատությունները թարգմանվել և հրատարակվել են աշխարհում բարձր գիտական վարկանիշ ունեցող երկրներում՝ ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Գերմանիա, Չինաստան, Լեհաստան և այլուր։ Նրանց մենագրությունների հիման վրա հատուկ դասընթացներ են կարդացվել աշխարհի տարբեր համալսարաններում։ Նրանք ստացել են բազմաթիվ պետական և ակադեմիական բարձր պարգևներ ու մրցանակներ և այլն։

Անկասկած, Հայաստանի համար կարևոր իրադարձություն էր անցյալ դարի առաջին կեսին երևանի պետական համալսարանի և Գիտությունների ակադեմիայի ստեղծումը։ Այդ ակտերով իրականություն դարձան հայ մտավորականության դարավոր իղծերը։ Միայն XX դարի սկզբին ինչ էլ գրել Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննես Թումանյանը. «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերենով և հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ՝ Հայկական ակադեմիա։ Եվ պետք է ստեղծել հայոց համալսարան, որ կարելի լինի բարձրագույն գիտությունը պլանդելու սովորել հայերենով»։

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան հանրապետության գիտական բարձրագույն մարմինն է, կառավարության պաշտոնական գիտական խորհրդատուն։ Նա կոչված է համակարգելու հանրապետությունում կատարվող գիտական հետազոտությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հիմնարար գիտությունների զարգացման վրա։

Հիմնարար գիտությունները դուրս են պետական սահմաններից, նրանց ստացած արդյունքները համընդհանուր են, մեկը մյուսին լրացնող։ Հիմնարար գիտությունները զարգանում են անընդմեջ՝ սնվելով նոր գաղափարներով և գիտական հայտնագործություններով։ Հին գաղափարները կրկնել, ընդլայնել, զարգացնել միշտ չէ, որ ռացիոնալ է, քանզի կրկնությունը, լինելով ուսման մայրը, շատ հաճախ դառնում է առաջընթացի խորթ մայրը։ Իսկ հիմնարար գիտությունը հենց առաջընթացի գրավականն է։

(Շարունակելի)

ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԴԻՏՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԵՇԼԿՈՒՅԹ (Հայաստանի հիմնաքարերը)

Նարեկացուն և շատ ուրիշ մեծերի։ Իսկ նոր և նորագույն ժամանակաշրջանների համար՝ Խաչատուր Աբովյանին, Կոնիտասին, Յովհաննես Թումանյանին, Մարտիրոս Արայանին, Յովսեփ Օրբելուն, Վիկտոր Համբարձումյանին, Արամ Խաչատրյանին և էլ շատ ուրիշներին։

Դժբախտաբար, ժամանակները փոխվել են. մտավորականներն արդեն մոռացվում են, գերաշնորհ են համարվում այլ ոլորտի «գործիչները»։

Այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետության ապագան, նրա վարկն աշխարհում ես տեսնում եմ գիտության, կրթության և մշակույթի մեջ։ Մյուսներն ածանցյալ են այս մնայուն մեծություններից։

Պետականությունը, քաղաքականությունը, տնտեսությունը, ազգային անվտանգությունը արժեքազրկվում են, եթե ամուր կանգնած չեն գիտության հաջողությունների, կրթյալ մարդկանց և բարձր մշակույթի տեր հասարակության վրա։

Այստեղ հիմնականում խոսվելու է գիտության մասին, որը սերտորեն կապված է կրթության և մշակույթի հետ։

Հայ մշակույթի՝ աշխարհում ճանաչում գտած գործերն, ըստ էության, և՛ ձևով, և՛ իմաստով ազգային են, հայկական։ Ես չեմ ընդունում ոչ հեռու անցյալում կանոնադրված կարգախոսը՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական։ Չեմ և բովանդակությունը շաղկապված են. բովանդակությունն է թելադրում ձևը, ձևը ածանցյալ է բովանդակության։ Իսկական բարձր արվեստը, լինելով ազգային, ունի համամարդկային հնչողություն, եթե գերծ է ազգային սահմանափակվածությունից, գեղեցիկ ընդօրինակումից և անիմաստ «մոդեռնիզմից»։ Նա պետք է իմաստավորված լինի համամարդկային արժեք ունեցող գաղափարներով։

Շատ են հայ ստեղծագործողների առաջնակարգ գործերը, որ գերծ են այդ թերություններից, գտել են համընդհանուր ճանաչում և պատիվ են բերում մեր ժողովրդին։ Այսպես, օրինակ, Գրիգոր Նարեկացին ոգեշնչեց մեր ժամանակների հայտնի կոմպոզիտոր Ալֆրեդ Շնիտկեին գրելու երգչախմբի համար մի հույակապ ստեղծագործություն, Ավետիս Իսահակյանի «Աբու-լալա Մահարին»՝ այս սքանչելի փիլիսոփայական պոեմը, թարգմանվեց մի քանի տասնյակ լեզուներով, Մարտիրոս Սարյանի կտավները զարդարում են տարբեր երկրների պատկերասրահները, Արշիլ Գորկին համարվում է ամերիկյան ժամանակակից կերպարվեստի հիմնադիրը։

Ներքից մեկը, Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները հայտնի են ամենուր, Վիլյամ Սարյանի անունը XX դարի մեծանուն գրողների շարքում է, Սերգեյ Փարաջանովի ֆիլմերը դարձել են դասական, հայոց դուդուկը հնչում է աշխարհի տարբեր անկյուններում և էլ շատ ուրիշ հայկական արժեքներ։

Դժբախտաբար, այսօր հասարակությունը փոխվել է. բարձրարժեք մշակույթ չի ընկալվում, նա կորցրել է իր հմայքը։ Լավագույն գրական երկերը համարյա չունեն ընթերցողներ, անուշադրության են մատնված հայ ստեղծագործողների բարձրորակ գործերը։ Իսկ մեր բեմահարթակներում և հեռուստատեսային հաղորդումներում, որոշ բացառություններով, գերիշխում են գավառականությունն ու շուկայական արվեստը։

Այս ամենը մտահոգիչ է։ Սա շատ լուրջ խնդիր է, որ պահանջում է անհապաղ լուծումներ։ Յուրաքանչյուր հապաղում ու բացթողում կարող է օրհասական լինել մեր ժողովրդի համար։

Կրթության հարցը միշտ եղել է Հայ առաքելական եկեղեցու, պետության և ժողովրդի ուշադրության կենտրոնում։ Հնագույն ժամանակներից Հայաստանում գործել են դպրոցներ և համալսարաններ։ Բավական է հիշել Մեսրոպ Մաշտոցի (V դար), Անանիա Շիրակացու (VII դար), Անիի (XI դար) դպրոցները, Սանահինի ակադեմիան (XII դար), Գլադորի (XIII դար) և Տաթևի (XIV դար) համալսարանները։ Ուսումնական կենտրոններ, որոնք դրեցին Հայոց գիտության և կրթության դարավոր ավանդույթների անկյունքները։

Հատկանշական է, որ ի տարբերություն ժամանակի եվրոպական համալսարանների, որտեղ դասավանդումը տարվում էր լատիներենով, հայկական համալսարաններում բոլոր առարկաները դասավանդվում էին մայրենի լեզվով՝ հայերենով։ Այս պայմաններում, կամիսարգելելով ազգային սահմանափակվածության վտանգը, հայերեն թարգմանվեցին այլազգի մի շարք հեղինակների ստեղծագործություններ՝ միաժամանակ աշակերտներին ուղարկելով տարբեր երկրներ՝ սովորելու լեզուներ և ձեռք բերելու այլ գիտելիքներ։ Պատահական չէ, որ հայերը միակ ժողովուրդն են աշխարհում, որ ունեն կանոնակարգված Թարգմանչաց տոն, իսկ առաջին նախադասությունը, որ Մաշտոցի կողմից թարգմանվել է հայերեն, եղել է Աստվածաշնչի այս խոսքերը՝ «Ճանաչել գիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»։

բազմաթիվ պետական և մասնավոր համալսարաններ, այլ երկրների համալսարանների մասնաճյուղեր։ Կասկածից վեր է, որ Հայաստանում չկա և առաջիկայում ևս չի լինի այդ համալսարանների քանակին համապատասխանող բարձրորակ պրոֆեսորա-դասախոսական կազմ։ Ստեղծված պայմաններում ուշադրության արժանի դասախոսները, եթե գիտական հետազոտությանը չեն զբաղվում, որպես կանոն, աշխատում են մեկից ավելի համալսարաններում, իսկայական ծանրաբեռնվածությամբ, չնչին աշխատավարձով։ Այս ամենը բերում է նրան, որ դասախոսը դադարում է գիտությամբ զբաղվելուց, չի հաղորդակցվում ժամանակակից գիտության հնչողություններին՝ տարեցտարի կորցնելով իր բարձր որակավորումը։ Արդյունքում՝ ցածր որակի դասախոսություններ և ցածր որակավորում ունեցող շրջանավարտներ։

Ինչպես հայտնի է, հանրապետության կրթական համակարգը վերակառուցվում է ըստ Բոլոնիայի համաձայնագրի։ Ըստ իս, այդ համաձայնագրի պահանջները պետք է իրականացվեն որոշ վերապահումներով։ Ուժի մեջ պետք է թողնել այն ամենը, որը տասնյակ տարիներ տվել է լավագույն արդյունքներ, բարձրորակ մասնագետներ, որոնք հաջողությամբ աշխատում են աշխարհի բարձր վարկանիշ ունեցող ձեռնարկություններում, բարձրագույն դպրոցներում, գիտական կենտրոններում։

Հայաստանի Հանրապետության ամենակարևոր հիմնախնդրներից մեկը կրթական համակարգի բարեփոխումն է և նրա առջև ծառացած բազմաթիվ և բազմաբովանդակ չլուծված խնդիրների լուծումը։ Ստեղծված պայմաններում արտակարգ կարևորվում է Կրթության և գիտության նախարարության դերը։ Այսօր նա պետք է զբաղվի միայն այդ հույժ կարևոր գործով՝ իրեն ազատելով գիտությունը կառավարելու՝ քիչ պակաս ծանր հոգսից։ Վախենալ պետք չէ, գիտությունը ինքնակառավարվող է, և նրա զարգացման գրավականը հենց նրա ազատությունն է։

Պետք է Բոլոնիայի համաձայնագրին միանալ ինչպես նաև եվրոպական այլ կառույցների մեջ մտնել՝ չմոռանալով մեր բազմամյա ձեռքբերումները։ Այդ գործընթացը պետք է լինի արժանավայել։ Անկասկած, նորն ու լավը պետք է ընդունել՝ այն համապատասխանեցնելով երկրի հնարավորություններին և ավանդույթներին։

Մենք եվրոպացիներ չենք, մենք եվրոպականացված ասիացիներ ենք, որն,



Փոխադարձ հետաքրքրություն և քաղաքական կամքի դրսևորում

Հայաստանը և ճապոնիան գտնվում են միևնույն մայրցամաքում՝ Ասիայում, սակայն նրա տարբեր ծայրամասերում և միմյանցից հեռու են հազարավոր կիլոմետրեր: Բայց դա խոչընդոտ չէ, մասնավոր մեր օրերում գիտության և տեխնիկայի անսահման զարգացման դարաշրջանում, նրանց միջև տարաբնույթ մոտ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու համար: Իսկ դրա համար անհրաժեշտ է փոխադարձ հետաքրքրություն և քաղաքական կամքի դրսևորում: Բարեբախտաբար, այս երկու գործոններն էլ առկա են:

Ճապոնիան աշխարհի ամենազարգացած երկրներից մեկն է, որը հասել է տպավորիչ հաջողությունների գիտության, տեխնիկայի և մշակույթի ասպարեզներում և առաջատար դիրքեր է գրավում համաշխարհային տնտեսության մեջ:

Հայաստանն աշխարհի հինավուրց երկրներից մեկն է իր ինքնատիպ քաղաքակրթությամբ, որը համաշխարհային մշակույթը հարստացրել է անկրկնելի կոթողներով: Նա ունի բարձր զարգացած մշակույթ և հայտնի է իր գիտական ներուժով ու այսօր ձգտում է ստեղծել ժամանակակից առաջավոր տնտեսություն՝ օգտագործելով զարգացած երկրների, այդ թվում նաև ճապոնիայի ուսանելի փորձը:

Զնայած աշխարհագրական հեռավորությանը՝ այս երկու երկրների միջև հաստատվել են բարեկամական բնույթի քաղաքական, տնտեսական և մշակութային կապեր, որոնք զարգացնում են հաջողությամբ՝ ի շահ երկու երկրների: Հայերը և ճապոնացիները միմյանց նկատմամբ տառնում են խոր հարգանք և բարձր են գնահատում միմյանց հոգևոր և նյութական արժեքները:

Բոլոր տարբերություններով հանդերձ Հայաստանը և ճապոնիան բազում նմանություններ ունեն բանական հարուստ պաշարների բացակայություն, հզոր մարդկային և մտավոր ներուժ, աշխատասիրություն, հակում գիտության նկատմամբ, պատմական հարուստ անցյալ, ազգային ինքնատիպ մշակույթ և այլն:

Եվ՝ Հայաստանում, և՛ ճապոնիայում մարդը և բնությունը գտնվում են մշտական մրցակցությունում ու պայքարի մեջ: Երկուսն էլ գտնվում են ակտիվ սեյսմիկ գոտիներում: Ճապոնիան նույնքան լեռնոտ երկիր է, որքան Հայաստանը: Անգամ նման են երկու երկրների խորհրդանիշ լեռ-

ները՝ բիրիական Արարատը և Ֆուժիյաման:

Սակայն բնության դաժանությունը և ժլատությունը Հայաստանում և ճապոնիայում փոխհատուցվում են հայ և ճապոնացի ժողովուրդների ստեղծագործական կենսաուժով, աշխատասիրությամբ և համառությամբ: Նրանք կարողացել են մշտապես համընթաց զնալ համաշխարհային զարգացումների հետ: Հայաստանը, հանդիսանալով աշխարհում առաջին քրիստոնյա պետությունը և կարևոր ռազմական դիրք գրավելով Արևմուտք-Արևելք և Հյուսիս-Հարավ տանող



ճանապարհների խաչմերուկում, եղել է պատմական «Մետաքսի ճանապարհի» ամենաակտիվ մասնակիցներից մեկը: Իսկ ժամանակակից աշխարհում անհնար է պատկերացնել առանց ճապոնիայի նվաճումների առաջավոր տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի, տարբեր գիտությունների ասպարեզներում:

Հայաստանի և ճապոնիայի միջև միջպետական հարաբերությունների հաստատման առաջին քայլերն արվել են 1918-1920 թթ., երբ վերականգնվեց հայոց պետականությունը, և կազմավորվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Զնայած այդ հանրապետության կարճատև գոյությանը և նրա առջև կանգնած դժվարություններին՝ նա կարողացավ դիվանագիտական հարաբերություններ հաստատել աշխարհի մի շարք պետությունների հետ, բացել իր դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսությունները, այդ թվում նաև ճապոնիայում: Այս երկրում Հայաստանի առաջին հյուպատոսը եղել է Դիանա Աբգարը:

Հայ և ճապոնացի ժողովուրդների միջև հարաբերությունները որակական նոր մակարդակի բարձրացան 1991 թ.: Հայաստանի անկախության հռչակումից և երկու երկրների միջև 1992 թ. սեպտեմբերի 7-ին դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո: Այդ պահից սկսած հայ-ճապոնական հարաբերությունները զարգանում են որպես միջպետական հարաբերություններ, որոնք ներառում են քաղաքական, տնտեսական, առևտրաֆինանսական գիտական, մշակութային և մարզական ոլորտները:

Այդ բոլորը հիմք հանդիսացան նախաձեռնելու սույն աշխատությունը, որն առաջին փորձն

է ամփոփ կերպով հետազոտելու և ներկայացնելու հայ-ճապոնական երկկողմ հարաբերությունները, որը, համոզված ենք, ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն:

Աշխատությունը կազմված է չորս գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է որոշակի հիմնախնդրի լուսաբանությանը:

Առաջին գլխում համառոտակիորեն տրված են Հայաստանի զարգացման պատմական ուղին և պետական, քաղաքական և հոգևոր զարգացումները դարերի ընթացքում: Այն գրված է հաշվի առնելով գլխավորապես օտար, տվյալ դեպքում ճապոնացի ընթերցողին, որին շատ բան հայտնի չէ Հայաստանի մասին:

Երկրորդ գլխում ներկայացված է հայ-ճապոնական քաղաքական հարաբերությունների ողջ պատմությունը և ժամանակագրությունը: Այստեղ ընդգծված է այն միտքը, որ Հարավային Կովկասում ռազմավարական կարևոր դիրք զբաղեցնող Հայաստանը, որպես տարածաշրջանի առավել կազմակերպված և կայուն երկիր, կարող է վստահելի գործընկեր լինել ճապոնիայի համար:

Երրորդ գլուխը նվիրված է Հայաստանի և ճապոնիայի համագործակցությանը տնտեսական ոլորտում:

Եվ, վերջապես, չորրորդ գլխում քննարկվում են հայ-ճապոնական հարաբերությունները մշակույթի և գիտության բնագավառներում:

Եվ թե միջպետական հարաբերությունների քննարկումը ժամանակագրական առումով ընդգրկում է 1991-2004 թթ., այսինքն՝ հիմնականում Հայաստանի երրորդ հանրապետության շրջանը, երբ Հայաստանը դարձավ անկախ պետություն, դուրս եկավ միջազգային ասպարեզ, և դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին նրա ու ճապոնիայի միջև, ապա ժամանակագրական այդ սկզբունքը չի պահպանվել, երբ խոսքը գնում է նրանց հարաբերություններին կամ շփումներին տնտեսական, մշակութային և գիտական ոլորտներում:

Սույն աշխատության իրականացմանը նպաստող գործոնների շարքում հարկ ենք համարում նշել երկու հանգամանք:

Առաջինը՝ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի կազմում Հայաստանի կառավարության 2003 թ. որոշումով Արևելյան Ասիայի երկրների բաժնի ստեղծումը, որը Հայաստանում ճապոնիայով, Չինաստանով և Հնդկաստանով զբաղվող միակ գիտական կենտրոնն է:

Երկրորդը՝ Երևանի հումանիտար ինստիտուտի ստեղծումը, որտեղ առաջին անգամ Հայաստանում սկիզբ դրվեց ճապոնական գրականության և արվեստի, ճապոներենի մասնագիտական ուսումնասիրությանը: Այդ ինստիտուտն արդեն տվել է իր առաջին հայ շրջանավարտները:

Չեղինակները խորին շնորհակալություն են հայտնում «Ճապոնական հիմնադրամին»՝ համապատասխան դրամաշնորհ տրամադրելու համար, ինչպես նաև Մոսկվայում ճապոնիայի դեսպանությանը՝ ի դեմս ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Իսսեյ Նոմուրայի՝ սույն աշխատությանը մեծապես օժանդակելու համար:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀՈՒՇՆԵՐ

2 չողներին և ուղարկել քաղաք, չենթարկվողներին, նույնիսկ իրավունք էր վերապահված, զնդակահարել տեղում:

Պարզվեց, որ Ստալինը կարգադրել է երեք օրվա ընթացքում վերականգնել քաղաքի իրադրությունը և պատրաստվել բարձր մակարդակով նշելու Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձը:

Նոյեմբերի 7-ին Կարմիր հրապարակով շարքերով անցնում էին ռազմական մեկնող զինվորական միավորումների շատերը, ռազմաճակատ էին շարժվում տանկերի, հրանոթների և մեխանիզացված այլ զորամիավորումներ: Այդ օրից հետո Մոսկվայում համեմատաբար հանգիստ կյանք սկսվեց:



Մոսկվայի ողջ շրջապատում կառուցվում էին հզոր պաշտպանական գծեր, դրանցում աշխատում էին Մոսկվայի գործարանների և այլ հիմնարկների աշխատողները, ամենուրեք շարվում էին թիթեղից կամ փայտից պատրաստված տանկեր և հրանոթներ:

Հետագայում մենք կարդացինք գերմանական ռազմաօդային ուժերի գոյությունը Հիտլերին «Մոսկվայի շրջապատում ստեղծվել են հզոր պաշտպանական գոտիներ»:

1941 թվականի վերջերին հրաման ստացանք անցնել հարձակման: Մեր գունդը առաջ շարժվեց մոտ 10 կմ, սակայն հարևան գնդերը ճեղքել ճակատը չկարողացան:

Ավելի քան 10 օր մեր գունդը մնաց շրջապատման մեջ, թիկունքի աշխատողները չէին կարողանում մեզ ուղարկել սննդամթերք և զինամթերք: Շրջապատումից մենք դուրս եկանք հունվարի 2-ին, երբ ամբողջ Արևմտյան ռազմաճակատով մարշալ Ժուկովի ղեկավարությամբ, բանակը անցել էր հակահարձակման:

Մեր հաղթանակը ապահովեցին Մոսկվայի աշխարհագրայինները և Սիբիրից եկած զինավարժ դիվիզիաները:

Թշնամին ետ շարժվեց մոտ 100-150 կմ, մեր գնդերը հասան Վյազմա քաղաքի մատույցները: Ես հարձակման ընթացքում վիրավորվեցի և 1942 թվականի վերջերին ընկա հոսպիտալ:

Հոսպիտալից դուրս գալուց հետո ես գնացի բանակի ռազմաքիմիական ծառայության զվարճարան՝ մեր նշանակում ստանալու համար:

Անցնում էի երկար միջանցքով և նայում էի դռների վրա գրվածներին: Հանկարծ աչքիս ընկավ դռներից մեկի վրա գրված ցուցանակը՝ «Ինժեներ-փոխգնդապետ Լևին»:

Զգիտեմ ինչու, մտքովս անցավ մեր գնդում, իմ հրամանատարության տակ եղած քիմիական ծառայության միավորումում ծառայող այդ ազգանունով մեկը՝ աշխարհագրային: Երբ զոհվեց մեր միավորման հրամա-

նատարը, Լևինը մոտեցավ ինձ և խնդրեց իրեն ժամանակավորապես նշանակել հրամանատար: Ես կատարեցի նրա խնդրանքը: Մեկ ամիս անց նրան կանչեցին դիվիզիա և ես այլևս նրան չտեսա:

Առանց երկար մտածելու ես բացեցի դուռը: Գրասենյակի մոտ նստած էր փոխգնդապետ Լևինը: Ես լեյտենանտից հասել էի կապիտանի կոչման, իսկ Լևինը շարքայինից դարձել էր փոխգնդապետ: Զարմանալի է, սակայն դա իրականություն էր:

Ես ստացա նշանակում: Ծառայության մեկնեցի որպես Հարավային ռազմաճակատի օդային պաշտպանության դիվիզիայի 908-րդ գնդի քիմիական ծառայության պետ: Այդ գնդի հետ միասին ես մասնակցեցի Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի ազատագրմանը և Գերմանիայի մի շարք քաղաքների գրավմանը:

Մայիսի 4-ն էր: Ես հերթապահում էի գնդի շտաբում: Հանկարծ քաղաքի կողմից լսեցի ավտոմատների և գնդացիների կրակոցներ, որը տեղե մեկ ժամ: Հեռախոսով զանգեցի քաղաքի պարետին և իմացա ուրախալի լուրը՝ պատերազմը ավարտվել է, Գերմանիան լրիվ կապիտուլյացիայի է ենթարկվել: Երեք օր անց լսվեց Մոսկվայի ռադիոյի ձայնը՝ դա Մայիսի 9-ի Հաղթանակի կոչի ձայնն էր:

1946 թվականի հունիսին ես զորացրվեցի, եկա Երևան և նվիրվեցի գիտությանը ծառայելու գործին:

Ս. Ա. ՄԻՐԶՈՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԻՄՍ ակադեմիկոս



(Սկզբը նախորդ համարում)

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում Մառի ուսմունքի քննադատների ուշադրությունը հրավիրել հետևյալ պարագաների վրա. հաբեթաբանություն-հաբեթական եզրը նույնքան պայմանական է, որքան սեմաբանություն-սեմականը, հետևաբար նրանից չպիտի սարսել, այլ անհրաժեշտ է պարզել, թե ինքը տեսության հեղինակը ե՞րբ և ի՞նչ բովանդակություն է տեսել նրա մեջ: 1908-16 թվականների

ստուգաբանություն, որոնց համար շատ թե քիչ ճշգրտված է նշանակությունը: Կարծում ենք, որ խորիմտա-ուրարտական լեզուները հյուսիս-արևելակովկասյան լեզվաընտանիքի առանձին ճյուղ են կազմում»: Դետաբար՝ Ն. Մառի դիտարկումները «հյուսիսում կենդանի լեռնական լեզուների» և «հարավի սեպագրերի մեռած լեզուների» վերաբերմամբ շարունակում են զբաղեցնել լեզվաբաններին:

Մեր համոզմամբ՝ հիմնազուրկ չեն

լի անցյալ ապահովող մենագրություններ էին հայտնվում, բայց նրանք քիչ էին ազդում ազգային ինքնագիտակցության վրա և մնում էին պատմության ճանաչողական գործառնության շրջանակներում:


Շատ չանցած, սակայն, պատմական գիտության քաղաքականացումը բերեց նրան, որ կուսակցական կանխադրույթներն ու ազգայնական միտումները սկսեցին նշանակալի դեր խաղալ, իսկ պատմական աղբյուրներին քիչ կարևորություն տրվեց, խարդավանքը երբեմն հասնում էր բնագրից անցանկալի վկայությունների օտարման կամ նույնիսկ երբևէ այլ էթնիկ միավորի ներկայություն վկայող նյութական մշակույթի հուշարձանների ոչնչացման, մասնավորապես նրանք խանգարում էին պատմական հիշողության շրջանակներում վերաիմաստավորմանը: Պատմագիտությունը, որքան էլ ցավալի է, հաճախ իջեցվում էր սիրողական մակարդակի, և այն տարփողողները զանգվածային լրատվության էջերից ահաբեկում էին ակադեմիական գիտության ներկայացուցիչներին:

Նման պարագայում հախտոնություն կարող էր պատել նաև գիտության սպասավորներին, և նրանցից ոմանք իրոք զիջեցին իրենց հետազոտական սկզբունքները: Հանդիմանության են արժանի մասնավորապես Այսրկովկասի պատմության ու մշակույթի մասնագետները, որոնք իրենց տրամադրության տակ ունենալով անհամեմատ ավելի շատ պատմողական ու նյութական աղբյուրներ, պարտավոր պիտի զգային պահպանել մեկնաբանության գիտական նորմը: Սակայն տարածաշրջանային պատմության ուրվագիծ կազմելու բոլոր փորձերը վերջացան հարևան պետությունների մասնագետների դուրսբերի և վարկածների քննադատությամբ: Մինչդեռ Հարավային Կովկասը բազմազգությամբ քանիցս գերազանցող և վարչական կառուցվածքով շատ ավելի խրթին կազմ ներկայացնող Հյուսիսային Կովկասը հաղթահարեց տարածայնությունները և ներկայացրեց հնագույն ժամանակներից գեթ մասամբ ընդհանրացնող պատմություն: Թերևս այստեղ ևս ոչ քիչ չլուծված խնդիրներ մնացին, սակայն հյուսիսկովկասյան ժողովուրդների պատմությունների ընդհանրությունները պատշաճ մակարդակով բացահայտված ու գնահատված են:

Մենք, Հարավային Կովկասի ներկայացուցիչներս, պետք է հաղթահարենք մեր իսկ ձեռքերով այս վերջին երկուերեք տասնամյակներին ստեղծած դժվարությունները և փորձենք վերադառնալ մեր տարածաշրջանի պատմությունը, մշակույթն ու մատենագրությունը ուսումնասիրելու ավանդական եղանակներին ու նորմերին: Որքան էլ ազնիվ ու մտահոգ լինեն մերձակա և հեռավոր արտասահմանի մեր գործընկերները, ինչ պատարասությամբ էլ նրանք առանձնանան, միջազգային որ հիմնադրամն էլ նրանց հետազոտությունը ֆինանսավորի, ինձ թվում է, թե այնուամենայնիվ՝ նրանք կօժկարանան ընկալել Կովկասի, ինչպես ժամանակին էին ասում՝ «կենդանի անցյալը»:

Իմ խորին համոզմամբ՝ մենք պիտի հիշենք, որ «ազգայնական միտումը որքան մոտ է մեզ՝ նույնքան ուժգին է (սակայն և հնում)՝ նա մենգափոխում անգամ սեփական ժողովրդի պատմությունը, ոչ միայն չի օժանդակում խնդրի էության լուսաբանմանը Կովկասի վերաբերմամբ, այլև կամա թե ակամա խեղաթյուրում է իսկական աղբյուրները» (Ն. Մառ, A-408, թերթ 2-4):

Եիշտ է՝ «պատմությունը սերունդների հիշողություն է», սակայն «Հիշողությունների կոլիզ», ով էլ այն գրած լինի, չի կարող մեզ համար սեփական պատմության մանրակերտ ծառայել:



ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. 21-րդ դար

Կամավորներ՝ Մարս ուղևորվելու համար

2005 թվականի աշնանը սկսվելու է կամավորների հավաքագրումը Մարս մոլորակի ղեկավարվող թռիչքի մոդելավորման փորձի նպատակով: Այս մասին հայտարարել է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի բժշկականաբանական պրոբլեմների ինստիտուտի բաժնի վարիչ Մարկ Բալակովսկին: Վերջինիս նշել է, որ կամավորների հավաքագրման ելակետային հիմք կհանդիսանա 2005 թվականի սեպտեմբերին Բեռլինում անցկացվելիք կոսմոկական կենսաբանությանը և բժշկությանը նվիրված միջազգային կոնգրեսը, որտեղ պետք է քննարկվեն այս փորձի նախագիծը և այն իրականացնելու առաջարկությունները:

«Արդեն այսօր»՝ ասում է Բալակովսկին, «նամակներ են գալիս ԱՄՆ-ից, Դոմաստանից, Բելգիայից, Ավստրիայից, որոնց հեղինակները ցանկություն են հայտնում մասնակցել այս փորձին: «Այս փորձը հզոր աջակցություն ունի «Ռոսկոսմոս»-ի և Ռուսաստանի գիտությունների ազգային ակադեմիայի կողմից: Միաժամանակ իրենց համագործակցությունն են առաջարկում եվրոպական կոսմոսկական գործակալությունը և Կանադական կոսմոսկական գործակալությունը:

Փորձի համար պետք է ընդգրկվեն առնվազն ըստ մարդ: Վեց հոգին կկազմեն նավի «անձնակազմը», վեց հոգին կընդգրկվեն վերահսկող խմբում, որոնք ապահովելու են փորձը արտաքին կողմից, ըստ որում ընտրվելու են միայն տղամարդիկ: Լինելու են նաև ուղևորներ:

Բալակովսկին բացատրեց, որ ընտրված երկու խմբերում էլ համեմատության համար պետք է արվեն հոգեբանական և ֆիզիոլոգիական ամենատարբեր ստուգումներ: Բալակովսկին ընդգծեց, որ դեպի Մարս ղեկավարվող տիեզերական թռիչքի մոդելավորման փորձը, որն անվանվել է «500 օր», զուտ ռուսական փորձ է՝ միջազգային մասնակցությամբ:

Նախատեսվում է, որ այսպես կոչված «500 օր» աննախադեպ փորձը կիրականացվի 2006 թվականին: Մոտավոր հաշվարկներով այն կարծես 10 միլիոն ամերիկյան դոլար: Իսկ ղեկավարվող նավով իսկական թռիչքը կարող է իրագործվել 2018-2030 թվականներին:

ՌԻԱ «ՆՈՎՈՍՏԻ»

Մենք մեր մասին

«Մենք մի հայ, առանձին վերցրած, առյուծ է, ինչպես և խելքով ու դատողությամբ՝ իսկա: Բայց ընկերական ոգու բացակայությունը, խմբովին գործելիս, ջլատում է նրա ուժերը: Զգեցեք մենակ հային վտանգների փոթորիկի մեջ, նա արժանավորապես կպաշտպանի յուր գլուխը: Բայց խմբեցեք մի քանի հայեր միասին, և նրանք պաշտպանվելու կամ հարձակվելու փոխարեն, կսկսեն խորհել, մտածել, հակառակ է, վերջապես, թշնամուն թողած՝ միմյանց միմյուր: Այո, անհատականությունը հայի գլխավոր թշնամին է, նա տարածված է մեր բոլոր դասակարգերի ու բոլոր գործերի մեջ: Արդյոք մեր ազգի մտավոր առաջնորդները կկարողանան մի փորձ հիմնարկել մեր հայությանը: Եթե այդ եղավ, մենք կարող ենք ապագա ունենալ, եթե ոչ՝ մենք կորած ենք, կամ կապրենք այնպիսի ամոթալի կյանքով, ինչպես ապրել ենք մինչև այսօր:

ԲԱՅՅԻ

Պարույր ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Կովկասյան մշակութային աշխարհի» ձևավորման պարբերաշրջաններն ու առանձնահատկությունները

Ակադ. Ն. ՄԱՌԻ ծննդյան 140 և մահվան 70-ամյա տարեկիցի առթիվ

հրապարակումներում Ն. Մառը հաբեթական է կոչում քարվելական լեզուները, ուշադրությունը կենտրոնացնելով սեմական լեզուների հետ ունեցած նրանց ընդհանրությունների վրա, որի մասին նա հայտարարել էր իր գիտական հետաքրքրությունների սկզբնական շրջանում: Երկրորդ շրջանը ընդգրկում է 1916-20-ական թվականները և բնութագրվում է հաբեթական լեզուների ընդգրկման շրջանակի ընդարձակմամբ. նրանց շարք են մուծվում արբաբա-արդիները, չեչեները և դաղստանյան լեզուները: Տեսության հեղինակի խոսքերով «Մեկ կողմից՝ շրջադարձը դեպի Կովկասի լեռնային կենդանի լեզուները հյուսիսում, այլ կողմից՝ դեպի հարավի մեռյալ սեպագիր լեզուները հասունանում էր տևականորեն, բայց անհետաձգելի դարձավ այն պահից, երբ մենք մոտենում էինք հաբեթաբանության զարգացման նոր շրջանին: Ա. Զիբոբան այս շրջանը անվանում էր կովկասաբանական:

Երրորդ շրջանը կարճատև է՝ ընդգրկում է գիտնականի 1920-23 թվականների աշխատանքները և, նույն Ա. Զիբոբանի բնութագրությամբ, այն կարելի է միջերկրային կոչել, քանի որ նրա մեջ են ընդգրկվում պելասգերները, էտրուսկերները և բասկերները: Այնուհետև արդեն մենք գործ պիտի ունենանք ստադիալ զարգացման տեսության հետ, երբ հնդեվրոպական լեզուները ընկալվում էին իբրև հաբեթական լեզուների փոխակերպություն:

Թե ինչ կատարվեց այս տեսության հետ և այն ինչպես քննադատության ենթարկվեց լեզվաբան գիտնականների և ամենակարող քաղաքագետների կողմից՝ հանրահայտ է, բայց ցավն այն է, որ «նոր ուսմունքի» հետ, այսինքն տեսական՝ կառույցի հետ, անեծքի ենթարկվեցին բազում կարևորագույն փաստական դիտարկումներ: Այսպես, օրինակ, առաջին պարբերաշրջանի «հաբեթական» եզրը փոխարինվեց «իբերո-կովկասյան լեզուներ»՝ հասկացությամբ, թեև լեզուների այդպիսի խմբակցության փաստը վաղուց և ոչ առանց հիմքի կասկածանքի է ենթարկվում շատ հեղինակությունների կողմից: Ի. Դյակոնովի և Ս. Ստարոստինի 1988 թ. հրատարակված «Խորիմտա-ուրարտական և արևելակովկասյան լեզուներ» աշխատության մեջ ասվում է, որ «այժմ կարելի է տալ ուրարտական բառերի 40 % և խուրիականի շուրջ 30 %

հին գրական հայերենում այսպես կոչված հաբեթական տարրերի առկայության Ն. Մառի արձանագրած իրողությունները, որոնք նրան ներկայանում էին իբրև մինչարիական ենթաշերտ (սուբստրատ) հայերենում: Այս մակարդակում կարելի է, ինչպես մեզ թվում է, համաձայնել նույնիսկ հայերենը երկակի բնույթի լեզու կոչելու նրա փորձին: Հազիվ թե արդարացված համարվի լեզվական հնէաբանության (պալեոնթոլոգիա) Ն. Մառի տեսության մերժումը: Նույնը վերաբերում է լեզվի և մտածողության հարցադրումներին: Այս տեսությունների հիմամբ է, որ կյանքի վերջին տարիներին Ն. Մառը անհրաժեշտ համարեց «Կովկասի պատմության շուրջ՝ ըստ լեզվի տվյալների» աշխատանքը հրապարակել (1933 թ.), և ամենևին արդարացի չեն այն լեզվաբանները, որոնք առանց կովկասագետ լինելու դատաստանական վճիռներ են կայացնում գիտական կովկասագիտության ճշմարիտ հիմնադրի հասցեին. «Կովկասը» գրում էր Ն. Մառը իր վերոհիշյալ հրապարակման մեջ.՝ երբեք չի եղել պատահական հանդիպումների և պատահական սոսկական բնականային հյուսիսից դեպի հարավ և կամ թեկուզ հարավից հյուսիս, արևելքից արևմուտք կամ արևմուտքից արևելք հոսող տարբեր ծագում ունեցող, միմյանց խորթ, ռասայական առումով հակոտնյա ժողովուրդների զանգվածների պարանոց: Այդ հակասում է իրականությանը»:

Եվ հիմարվի, խորհրդային պատմագրության մեջ XX դարի քսանական թվականներից մշակվեց բավական ունիվերսալ, թեկուզ երբեմն խիստ զաղափարականացված պատմագրական հայեցակարգ հասարակական գիտությունների մեթոդների, դրոլումների ու նպատակների ընդհանրության մասին: Անշուշտ, նման մոտեցումը ոչ հազվադեպ հանգեցնում էր պատմական անցյալի համահարթման, առանձին ժողովուրդների մշակութային ժառանգության որոշ դրվագների գիտակցական կամ ակամա սոսկական անտեսման, սակայն մեկնաբանման տարածայնություններն ու անցյալի իրողություններին դիմելը ազգային-քաղաքական բախումների չէին բերում, այլ կերպ՝ հակամարտության գաղափարախոսության չէին վերածվում: Անհնար է ժխտել, թե այդ տարիներին ևս ակադեմիական պատշաճության սահմաններից դուրս եկող և ազգային պատմությանը նախընտրե-

Լենսեր ԱՂԱԼՈՎՅԱՆ, ակադեմիկոս

ԱՆ ԱՅԴ ԾԵՐ ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐԸ, ՌԵԿՏՈՐՆԵՐԸ, ՏԵՐԵՆՆԵՐԸ...

Վերջերս կառավարական շրջանակների կողմից ինտենսիվորեն շրջանառվում է գիտական և ԲՈՒՀ-ական համակարգերում բարեփոխումներ իրականացնելու հարցը: Անշուշտ, խիստ անհրաժեշտ միջոցառում, սակայն չէինք ցանկանա, որ այն իրականացվեր կրթական համակարգի «օպտիմալացում» վարկաբեկված սցենարով, ուր նույնիսկ այդ բառը գործնականում իմաստազուրկված է: Առաջին մտահոգող լուրջ հարցը գիտական ու ԲՈՒՀ-ական համակարգերը երիտասարդ, խոստումնալից կադրերով համալրելու հարցն է, որի վերաբերյալ շուրջ տասը տարի անընդհատ ահազանգում են և SOS հայտարարում ինստիտուտների տնօրեններն ու «ծեր» ակադեմիկոսները: Եվ ահա գտնվել է հիմնական պատճառը՝ «17 ԲՈՒՀ-երի ղեկավարներից 7-ի տարիքը լրացել է, ԳԱՄ 41 ինստիտուտներից 27-ի տնօրենների տարիքը անցել է 65-ից, ԳԱՄ ակադեմիկոսներից ամենաերիտասարդը 65 տարեկան է: Իմ խնդիրներից մեկը դրանից ավելի երիտասարդ ակադեմիկոս ունենալն է, երիտասարդներից տեղ տալն է: Հազար ձևի ճանապարհները փակում են, հետո ասում են՝ զննե՛ք առաջ: Ու՛ր գնանք»: Շատ հարմար, իրականությունը աղավաղող ու հիմնական պատասխանատու լինելու փաստը վարպետորեն շրջանցող իշխանական գնահատական: Ի գիտություն վարչապետի, որի հանդեպ, որպես անձնավորության ու հայի, ունեմ բազմամյա ընդգծված հարգանք, ԳԱՄ ամենա-երիտասարդ ակադեմիկոսը 55 տարեկան է, իսկ թղթակից անդամը 47 տարեկան: Անշուշտ, ցանկալի է նրանց քվի ավելացումը, սակայն այստեղ չէ պրոբլեմը: Խնդիրը ԳԱՄ ինստիտուտները և ԲՈՒՀ-երը նոր պաշտպանած երիտասարդ գիտության բեկնածուներով և դոկտորներով համալրելու մեջ է: Ի վերջո նրանք պետք է համալրեն գիտության ոլորտը և դասախոսական կազմը ու ապահովեն համապատասխան ոլորտի առաջընթացը: Ինչպիսին է իրավիճակն այս առումով: Խոսենք ԳԱՄ Մեխանիկայի ինստիտուտի օրինակով, որի տնօրենն է, համանման պատկեր առկա է նաև մյուս ինստիտուտներում: Ինստիտուտում աշխատում են հինգ ակադեմիկոս և թղթակից անդամ, 19 գիտության դոկտորներ: Այսպիսի պայմաններում ամեն տարի հատկացվում է երկու ասպիրանտական տեղ, որից միայն մեկը՝ արտադրությունից կտրված: Բնական հարց է ծագում, իսկ ո՞ւմ հետ պետք է աշխատեն ու իրենց գիտելիքները փոխանցեն այդ պատկանելի քվով ակադեմիկոսները և գիտության դոկտորները: Մեկ ասպիրանտի հետ աշխատելուն ղեկավարին հատկացվում է տարեկան 50 ժամ և յուրաքանչյուր ժամի համար գիտության դոկտորը վարձատրվում է 540 դրամ (տարեկան մոտ 60\$), որտեղից՝ այս ծիծաղելի քվիլը: Եթե հաշվի առնենք, որ գիտաշխատողների աշխատավարձերի անընդհատ ռեկլամվող «բարձրացումից» հետո գիտության դոկտորի միջին աշխատավարձը կազմում է 26 հազար դրամ, ապա պարզ է դառնում, որ պետականորեն ոչինչ չկա խթանող դոկտորի

աշխատանքը և ընդհանրապես նրա մնալը ակադեմիական համակարգում: Դրան հակադիր, նախարարություններում և այլ գերատեսչություններում անընդհատ աճում է չինովնիկական անձնակազմը, նրանց համար սահմանված բարձր աշխատավարձերով: Պարոն իշխանավորներ, գոնե գիտության դոկտորներին վարձատրե՛ք հասարակ չինովնիկների չափ: Վաղուց հասունացել է բոլոր ռանգի բյուջետային աշխատողների աշխատավարձերի սահմանումը նվազագույն աշխատավարձի «պատիկ»-ների տեսքով և համապատասխան սանդղակին պետք է տեղյակ լինի լայն հասարակությունը: Կարծում են, որ այդ դեպքում գիտնականները, դասախոսները, բժիշկները, գրողները, արվեստագետները չէին հայտնվի գոյություն ունեցող չպատճառաբանված սանդղակի ամենաստորին հատվածում:

Չնայած ստեղծված ծանր պայմաններին, ակադեմիայի ինստիտուտների ասպիրանտները ատենախոսությունները պաշտպանում են հիմնականում ժամանակին և այս առումով երիտասարդ կադրերի պակաս չկա, պրոբլեմը նրանց աշխատանքի ընդունելն է, քանզի առաջարկվող 22 հազար դրամը ոչ ոքի չի գալարակցում: Ահա հիմնական խոչընդոտը ակադեմիայի և ԲՈՒՀ-ի երիտասարդացման: Պատրա՞ստ է արդյոք Հայաստանի Կառավարությունը ընձեռել յուրաքանչյուր ինստիտուտին հնարավորություն՝ յուրաքանչյուր տարի ընդունել աշխատանքի մեկ երիտասարդ գիտաշխատող՝ 120-150\$ համարժեք աշխատավարձով: Այդ դեպքում էապես կմեղմվի երիտասարդացման պրոբլեմը: Դրան կարելի է հասնել, մասնավորապես, թղթարարության անօգուտ դեգեր ծնող չինովնիկական ապարատի իրական օպտիմալացման հաշվին:

2005 թվականից ակադեմիայի ինստիտուտներն անցել են բազային և թեմատիկ ֆինանսավորման: 2004թ. համեմատ մի քանի միլիոնով կրճատվել են ինստիտուտներին հատկացվող տնտեսական և այլ ծախսերը: Մայիս ամիսն է վերջանում, իսկ ինստիտուտները չեն ստացել իրենց հասանելիքից և ոչ մի դրամ տնտեսական ծախսեր: Տնօրենները հայտնվել են անելանելի վիճակում էլեկտրաէներգիայի, հեռախոսի, կոմունալ ծախսերի անհետաձգելի վճարման անհրաժեշտության պատճառով, իսկ որոշ տնօրեններ ստիպված են փակել կուտակված պարտքերը տրամադրված աշխատավարձերի հաշվից: Պարոնայք, ի՞նչ բարոյական և իրավական հիմքեր ունեն այդպես վարվելու գիտության հետ:

Հայտնի է, որ գիտնականի վատտակն առաջին հերթին գնահատվում է նրա գիտական արդյունքներով և պատրաստած կադրերով (այդ քվում վերջին հինգ տարիների կտրվածքով), այլ ոչ թե տարիքային ցեղով: Այս սկզբունքը պետք է գերիշխող լինի բոլոր տիպի վարչարարական որոշումներ ընդունելիս:

ԳԱՄ ինստիտուտներին և ԲՈՒՀ-երին պարտադրված «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» օրենքը սահմանափակում է ինստիտուտների և ԲՈՒՀ-երի գործունեությունը, մասնավորապես շահութաբեր գործու-

նեություն ծավալելու հարցում, իսկ այդ օրենքի Հոդված 16-ի 3րդ կետը հակասում է ինստիտուտների կանոնադրությանը և ինստիտուտների և ԲՈՒՀ-երի դեպքում պետք է կիրառվի այդ օրենքի Հոդված 15-ի 1 կետը: ԳԱՄ ինստիտուտների գործող կանոնադրությամբ, տնօրեններն ընտրվում են ղեմնկրատական սկզբունքով, չորս փուլից բաղկացած ընտրական համակարգով՝ բեկնածուների առաջադրում ինստիտուտի գիտական խորհրդի և այլ խորհուրդների կողմից, փակ գաղտնի քվեարկություններ համապատասխանաբար ինստիտուտի գիտական կոլեկտիվում, ԳԱՄ բաժանմունքում, ԳԱՄ Նախագահությունում: Ընտրություններում հատուկ ուշադրություն է դարձվում հավակնորդի գիտական գործունեությանը հատկապես վերջին հինգ տարում և այստեղ ոչ թե երիտասարդներին ճանփա չեն տալիս, այլ առաջադրվող պայմաններն են բարդ: Կարծում ենք, որ ԳԱՄ Նախագահության ձևավորման ժամանակ ևս առավել չափով պետք է ուշադրություն դարձվի նրա անդամների գիտական գործունեության բափանցիկության վրա, այդ դեպքում հարկ չի լինի խոսել տարիքային ցեղի մասին:

Բացառված չէ, որ իշխանությունները, օգտվելով վերը նշված օրենքի հակասություններ պարունակող կետերից, անցնեն տնօրենների նշանակմանը, դարձնելով ինստիտուտները տվյալ պահի այս կամ այն քաղաքական ուժի կցորդ: Ակադեմիան պետք է մնա ապաքաղաքականացված կառույց և իր բազմակողմանի և բազմաբնույթ վերլուծություններով և առաջարկություններով օգնի պետությանը:

Վերջապես ինչու՞ մեր անկախ հանրապետությունը չի կարող ունենալ օրենք «Գիտական և կրթական կազմակերպությունների մասին», որը հաշվի առնե՛ր այդ լայն ոլորտների բոլոր առանձնահատկությունները:

Մթնոլորտը Գիտությունների ազգային ակադեմիայի շուրջը շիկանում է հատկապես ԳԱՄ սպասվող ընտրությունների նախաշնչին և ընտրություններից հետո մի կարճ ժամանակ: Այսօր շրջանառության մեջ դրված որոշ դրույթներ՝ կապված ակադեմիան ցրելու, հասարակական կազմակերպություն դարձնելու, արտասահմանյան փորձագետների գնահատման հենքի վրա նոր ակադեմիա ձևավորելու (իսկ Եվրամիությունը հենց մեր ակադեմիկոսներից շատերին է ընտրել որպես գիտության գծով փորձագետներ) և այլնի հետ, դրա ապացույցն է: Որպես կանոն, նման վայնասուն բարձրացում են նրանք, ովքեր չեն կարողանում իրենց զավակներին, մտերիմներին խցկել ակադեմիա և գիտության մեջ քիչ-քիչ շատ ներդրում ունեցող ալբերիկոսները, որոնք հույս չունեն ընտրվելու, քանի որ կան առավել արժանիները: Իսկ որ վերջինները կան՝ կասկած չկա, քանզի ամեն մի թափուր տեղի համար միշտ հավակնում են 15-20 հոգի, որոնցից առնվազն հինգը արժանի են ընտրվելու: Պարադոքսը կայանում է նրանում, որ հենց արժանիները չեն մեծ աղմուկ բարձրացնողները, հաշտվելով հատկացված տեղերի սահմանափակության փաստի հետ: Գիտությունների ակադեմիան միշտ ջանացել է անաղարտ պահել իր շարքերը: Եզակի չեն դեպքերը, երբ ակադեմիայի ընդհանուր ժողովը դրսևորելով խստապահանջություն, «ոչ» է ասել նույնիսկ բաժանմունքներով անցած որոշ գիտնականների:


Գիտությունների ազգային ակադեմիան մեր ժողովրդի գերագույն արժեքներից է, պետության բարգավաճման երաշխիքներից մեկը, բոլորիս պարտքն է պահել նրան անաղարտ, հզորացնել և բազմապատկել նրա փառքը, իսկ ակադեմիան պարտավոր է իր մշակունքներով թերթացնել ժողովրդի և պետության հոգսերը:




Այս ճապոնոսիները նման են ոչ միայն արտաքինով, այլև իրենց երկարակեցությամբ: Պարզվում է, որ (իբր) քրոնոսոմը, որը երկարակեցության հովանավորն է, մի քանի անգամ ավելի շատ է կանանց մոտ, քան տղամարդկանց: Հենց այդ (իբր) էլ համարվում է մարդկանց օրգանական կենսի դիմացկունության և երկարակեցության գրավականը:

HFFA-ն կառավարական գործա-

կալություն է, որը վերահսկում է Սեծ Բրիտանիայում ամբողջ ղեղազորական արտադրությունը: Այն նաև տալիս է արտոնագրեր մարդու սաղմի բջիջները ուսումնասիրելու համար: Այդ 7-օրեկան սաղմը գտնվում է նախապատվաստման փուլում: Նրա արտաքին պատը բացվել է միկրովիրահատական ճանապարհով, սաղմի կոկոնի բջիջներին հասնելու համար: Դրանք այն բջիջներն են, որոնք ծնունդ են տալիս սաղմի բջիջների սերնդին:



Թեփուկավոր միջատների ծուղակը պատրաստվում է գիշերը սպիտակ կտորի և լույսի օգնությամբ: Ընց այս եղանակով բռնված գայլանայի բիթերներից է հայտնաբերվել հակասնկային բիթերը (նմուշ):



Ինչպես առաջացավ «Ատլաս» հասկացությունը

Աշխարհագրական քարտեզների հավաքածուն ԱՏԼԱՍ անվանելու սովորույթը սկիզբ է առել 1602 թվականից, երբ հրատարակվեց «Ատլաս կամ կոսմոգրաֆիական դատողություններ աշխարհի ստեղծման և տիեզերքի արարման մասին» աշխատությունը: Այն ֆլամանդական նշանավոր քարտեզագետ Գ. Մերկատորի վերջին և հետմահու հրատարակված աշխատությունն էր՝ բաղկացած 111 քարտեզներից: Մերկատորը վերիշիւմ է առասպելը այն մասին, թե ինչպես տիտանները ապստամբեցին Չևս գերագույն Աստծո դեմ և պարտություն կրեցին: Տիտաններից մեկը՝ Ատլասը, Չևսի հրամանով դատապարտվեց հավերժ իր ուսերին պահել երկնականաբար: Սրա նմանողությամբ էլ քարտեզների ժողովածուն, որը ներկայացնում է երկրագնդի ամբողջ մակերևույթը և որը կարծես իր ուսերին է պահում ողջ երկնականաբար, որոշվեց անվանել Ատլաս:

Ահա այն բառերը, որ գրված են մեծահռչակ Մերկատորի դամբանաքարի վրա. «Անցորդ, ով էլ որ դու լինես, մի վախենա, թե այստեղ թաղված Մերկատորի վրայի հողաթուրմը ճնշում է նրան իր ծանրությամբ: Ձի ողջ հողագունդը բեռ չէ մարդու համար, որը Ատլասի նման իր ուսերին էր պահում նրա ողջ ծանրությունը»:

Մրցանակներ ակադեմիայի համակարգի գիտնականներին

Օրերս «Ռոբեր Պոլոսյան և որդիներ» հիմնադրամի սահմանած հանրապետության նախագահի մրցանակներ շնորհվեցին Հայաստանի գիտության և մշակույթի մի խումբ գործիչներին:

Գիտությունների ազգային ակադեմիայից մրցանակների արժանացան Աիդա Ավետիսյանը (քիմիական գիտությունների բնագավառ), Էդուարդ Խաչիյանը (երկրաշարժագիտություն), Վլադիմիր Սահակյանը, Զրաշյա Ասցատրյանը, Միքայել Գյուրջյանը, Ռոբերտ Թադևոսյանը (տեխնիկական գիտություններ և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ) և Զրաշ Բարթիկյանը (հունամիտար գիտություններ):

Գիտություն

Վլադիմիր ՍՈՒՐԱՂՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24 դ, հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է. տպագրության՝ 17.05.2005թ. "ГИТУТЮН" ("Hayka") gazeta HAH PA